

անուշեղէնով . ու երեկոթը փակուեցաւ շաւ ապաւորութիւնով մը : Անաթոլիա Գողէնի երաժշտութեան ուսուցիչ Բրօֆ Ա . Տաղլեան ազնուարար իր նուագախումբով բստանձնած էր նուագի բաժինը :

ԲԱՅՈՒՄ « ՀԱՅՈՐԳԻ » Գ . ՇՐՋԱՆԻՆ

Գեկա . 9 ին քաղաքիս ալգ . Ս . Սահակեան Իտաստի Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Հայորդի Աշակերտական միութեան Գ . շրջանի բացման հանդէսը , որուն կը նախագահէր Տիար Մ . Վարժապետեան :

Հանգէսին սկիզբը , Հայորդիի պաշտօնական քայլերգէն վերջ բեմ հրախուեցաւ վարժարանին բազմաբղիւն տեսուչը՝ Տիար Գազիկ Յզանեան . որ խիստ շահեկան և հետաքրքրաշարժ բանախօսութիւն մը բրաւ նիւթ ունենալով « Հայ լեզուին մէջ օտար ապրելը » :

Յարգելի բանախօսէն վերջ հեղահատէ արտայայտուեցան Հայորդիի հեռուեալ անդամները . — Ա . Օզանեան և Մ . Պալապանեան (գրատոր) , Գ . Գրիգորեան , Գ . Պէկեան և Հ . Թաթարեան (արտասանութիւն) :

Գրական այս ցերեկոթը փակուեցաւ մէկուեկէս ժամուան տեսողութէնէ մը վերջ , հաճելի ապաւորութեան մը տակ :

ԿՈՉ ՅՈՒՆԵԼԵՆԱԿԱՆ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿ .

Ա . Յորելեանկան Կրթատիրաց Ընկերութիւնը կազմուած է ի պատիւ Հայ նշանադրերու 1500ամեակի և Տպագրութեան 400ամեակի : Նպատակն է Վիճակիս գիւղորէից կրթութեան գործին ծաւալման օժանդակել , առհասարակ նպաստաւորելով թեմիս բոլոր կարօտ դպրոցները և մասնաւորաբար հաստատելով մեկ երկու Կեդր . նախակրթարաններ ձանդակի հայ գիւղախումբերու յարմար կեդրոններու մէջ :

Բ . Ընկերութեանս անդամակցելու պայմանն է իրել մտաքի զբաւ վճարել միանրուագ ամուսազն 5 դահեկան , և ամսէ ամիս բաժանորդագին վճարել ամուսազն 1 դահեկան :

Գ . Ընկերութեանս մտից հասոյթը անձեանմիայնի պիտի մնայ . մինչև որ դրամա-

գլուխը հասնի կարևոր գումարի մը : Իսկ բաժանորդագրութեան արդիւնքն առաջին տարի և և պաշտօնաւորէն պիտի յատկացուի նպատակին իրազորման :

Գ . Ընկերութեանս զբաւը անմիջապէս և միշտ պիտի յանձնուի Կայսր . Պանքային : (Մանրամասն ծանօթութեանց համար հարկ է ստանալ ընկերութեան կանոնագիրը որ ի մօտոյ պիտի հրատարակուի) :

Արգ . սոյն համառօտ տեղեկութիւնները տայէ յետոյ հրաւէր կը կարգանք մեր համակրելի ազգայիններու կրթասէր զգացումներուն՝ բերել իրենց բաժին օժանդակութիւնը , իրազրոծելու համար մեր սոյն բարի և ցանկալի նպատակը : Հարկ չենք աններ զիտեղ տալու թէ սոյն շտապող յառաջգիմութեան և լուսաւորութեան դարուս մէջ ազգի մը գոյութեան պահպանումին ու ամէն կարգի զարգացումին միակ երաշխաւորութիւնը դաստիարակութիւնն է :

Հարկ չէ նաև պարզել Վիճակիս գիւղօրէններու կրթական տիւրք վիճակը , դիտելով միայն թէ դպրոցներու մեծագոյն մասը 8-10 ոսկի տարեկան պիւտճէով բաւականցեր է մինչև օրս :

Իսկ սիրելի ազգայիններու յիշեցնել իրենց պարտականութիւնը հանդէպ Ազգիս կարօտութիւններուն՝ աւելորդ կը համարիմ , ճանհնալով զիրենք առհասարակ աղիւլ , կրթասէր և ամէն տարիներու մէջ իրենց պարտականութիւնն գիտցող ու կատարող անձնաւորութիւններ :

Այլ սոյն կոչովս առիթն է միայն զոր կը յիշեցնեմ սիրելի ազգայիններուս , անգամ մը ևս ի հանդէս բերելու իրենց կրթախրական բարեմասնութիւնը . ի յայտ անելու մասնաւանդ այս առիթով իրենց յարգանքը հանդէպ Հայ գրի և գրականութեան հոյանուն հեղինակներու , անմահ Սահակայ և Մեսրոպայ , և դպրութեան վաստակաւորներու և հայ ապագութեան գիւտի հանձարեղ մշակներու , որոց յիշատակը յաւելրժայնելու բարի բաղձանքէն և վիճակիս կրթութեան մղում տալու պարտականու-

Թեևն զբաւուած կը հրաւիրենք մեր ամեն սիրելի ազգայինները՝ անդամակցել բաժանորդագրուել, իրենց բնծայարեութիւնը ընելու մեր սոյն առաջադրեալ գործին :

Արդեամբ յարգեցէք ուրեմն յիշատակը անոնց որք հայ կեանքի բազմաշարքար և արիւնտա ճանապարհին վրայ հակառակ բազմադիմի արգելքներու հակադնական ու հակաքաղաքական կրթական հարուածներու՝ յաշտեցան ազգի գոյութեան և փրկութեան ջանք վառ պահել :

Յոյց առէք և գուք ուրեմն թէ սպրեւու և երջանիկ ու քաղաքակիրթ կեանքով ապրելու կենսունակ, զօրաւոր ոյժ մը կայ ձեր մէջ, թափ մը անընկճելի :

Թող հաճի ամեն հայ առանց սեռի և հասակի, զիբքի ու յարանուանական խրատութեան, քար մըն ալ լինքր դնելու սոյն բաժանուի շէնքին վրայ, զոր կը ցանկանք յանկուտակ իսպաս ազգային դաստիարակութեան ծաւալումին :

Աւտի վաստ՝ ըլլալով, Ազնիւ Տէր, Ձեր կրթատիրութեան՝ կը հրաւիրենք սր հաճիք սնդամ կյութեամբ ստատրել նորակազմ շնորհութեանս, որոյ առթիւ կանխաւ չընորհակալութեամբ և սիրոյ ողջունի :

Մեամբ աղօթաբար Առաջնորդ Հայոց ձանկի և նախագահ Յորկ Կրք. Բեկեռաքեան

ՀԱՄԱԶԱՍԳ Ծ. Վ. ԵՂԻՍԷԱՆ

ՆՇԱՆՏՈՒԹ

Ամառու 19ին Սամսոնի մէջ կատարուեցաւ նշանաւորի հանդէսը Տիար Խրիսթօ Փափաստիտ լուս և Օր. Մորթի Նիքոլաիտի Տիար Փափաստիտ լուս Գոլէճիս 1910 թ. ր'սնաւ րաներէն՝ եւանդուն երիտասարդ մր. է. սր ձեռնասորէն կը վարէ Սամսոնի Ամերիկեան Հիւպատոսական Գործակալութեան քարտուղարի պաշտօնը : Իսկ Օր. Նիքոլաիտի, Ամասիացի, անաչխութեան ամեն հանգամանքով օժտուած՝ իր մայրենի լեզուէն զատ զիտէ նաև հայերէն : Սոյն բարեկատն քնտրութեան առթիւ կը փութանք շնորհաւորել համակրելի բարեկամներս **ՀԱՐՍԻԱՆԻԹ**

Ամառու 26ին Սամսոնի մէջ տեղի ունեւ.

ցաւ պատկազրութեան հանդէսը Տիար Յովհաննէս Ն. Իրատեսնի և Օր. Հայկուհի Ա. կիմեսնի :

Տիար Իրատեսն, Չարչամպոյցի, 1908ին Գոլէճիս չըջանը աւարտելէ վերջ աւելարական ասպարէզը մտաւ : Իսկ Օր. Հայկուհի քոյն է Գոլէճիս նախկին սեանողներէն Տիար Աւետիս Ակիմեսնի, Եօզղապոյցի :

Արտապին բարեմաղթութիւններով կը շնորհաւորենք սոյն բարեհամբաւ քնտնիքները՝ իրենց այս բերկաւոր խնամութեան առթիւ :

ՏԽՐՈՒՆԻ

Ամերիկայէն նեապարալուրը գուժեց տրխուր մահը Օր. Մէլլիի, ծագկատի դասեր Գոլէճիս ներքին Տեսչին՝ Տր. Հուայթի :

Մինչ հոս՝ հայրենի յարկին առի՛ Կազանդի ծառին չուրջ զուարթութիւն կը տիրէր, անդին չէ՛ք Մէլլի իր հոգին կ'աւանդէր՝ նեաւ՝ ճնոզական գրգանքէ ու գգուանքէ՝ իրեն համար բարխաղ բազմաթիւ սիրողութով սիրտերէն միայն իր եզրապոր ունեւարով անարին վերեւ :

Մեր խորին վշտակցութիւնը Հուայթ քնտնիքին՝ իրենց սոյն գաւանակակիժ կարուտային առթիւ :

ՆՈՐ ԱՅԳ

Նոր Այգ ի Գ. տարեշրջանին համար խմբագրական մարմնը կազմուեցաւ բաւ նեապայայն. —

Արածնատէր անօրէնն ու խմբագր անօրէնը վերջնորուեցան. իսկ նորնախր անդամներն են Տիար Յարութիւն Գ. Վարկեհան և Գէարգ Նահապետեան : Աւարքեան յանձնախումբի անդամներն են Պարսնայք Յ. Թան՝ միլեան, Մ. Կիւղէլեան և Ա. Տիրացուան Շաւարշան իր շարձակութիւնը կը յայտնէ նախարգ Ամբապրութեան, և կը շնորհաւորէ նորնախրը՝ անձանձիր յարատեւութիւն մաղթելով անոր :

Արտուստի-Տեսիկ Գ. Յ. ԿԻԻԼԵԱՆ
Տիար Խրիսթօ Վ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ

ՄԱՐԶՈՒԱՆ ՏԻԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՍՕ ԵՒ ՍՐԱՄԵԱՆ

